ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑՅԱՆ

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Ալեքսանդր Դավթի Երիցյանը XIX դարի հայ նշանավոր պատմաբաններից է։ Նա ծնվել է Թիֆլիսում 1841 թ. հոկտեմբերի 24-ին ցարական աննշան պաշտոնյայի ընտանիքում։ Տասը տարեկան հասակում Երիցյանը մտնում է Ներսիսյան դպրոցը, բայց շուտով թողնում է այն։ 1854 թ. Երիցփոխյանի պանսիոնում փոքր-ինչ պատրաստություն ձեռք բերելուց հետո նա մտնում է գիմնազիա, սակայն հիվանդության պատճառով ստիպված է լինում հեռանալ հինգերորդ դասարանից։

Գիմնազիան թողնելուց հետո Երիցյանը աշխատանքի է անցնում զանազան հիմնարկություններում։ Սկզբում նա ծառայում է Կովկասի փոխարքայության պալատում, հետո նահանգական կառավարչական դիվանատանը, այնուհետև՝ գլխավոր վարչությունում և այլն։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Երիցյանը նշանակվում է Լոռիս-Մելիքովի և Չելյովնիկովի մոտ որպես առանձին հանձնարարությունների պաշտոնյա։ Պատերազմի ավարտումից հետո նա աշխատանքի է անցնում պետական կալվածքների մինիստրությունում։

Պետական գործերով հաճախակի կատարած գործուղումները քայքայում են նրա առանց այն էլ թույլ առողջությունը, և նա 1888 թ. ստիպված է լինում թողնել ծառայությունը։ Իր կյանքի վերջին 14—15 տարիները Երիցյանը անցկացրեց տանը, ամբողջապես նվիրվելով գիտությանը։ Նա մեռավ Թիֆլիսում 1902 թ. փետրվարի 21-ին 61 տարեկան հասակում։

Ալեքսանդր Երիցյանի գործունեությունը ծավալվեց XIX դարի 50—60-ական թվականներին՝ պատմական մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, քայքայվում էր բնափակ տնտեսությունը և սաղմնավորվում էին կապիտալիստական հարաբերությունները։ Հասարակության տնտեսական կյանքում տեղի ունեցող այդ տեղաշարժերը իրենց արտահայտությունն են գտնում հասարակական մտքի բնագավառում. առաջ են գալիս տարբեր խավերի շահերն արտահայտող դեմոկրատական, լիբերալ բուրժուական, ազգային-պահպանողական և կղերա-աղայական քաղաքական հոսանքները։

Լիբերալները, ինչպես հայտնի է, արդյունաբերական բուրժուազիայի գաղափարախոսներն էին։ Նրանք պայքարում էին ֆեոդալական կարգերի պաշտպան կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչների դեմ և պրոպագանդում էին հասարակության բուրժուական զարգացումը։ Սակայն լիբերալները այդ պայքարում խիստ չափավոր էին։ Նրանք դեմ էին արմատական վերափոխումներին, հեռու էին ժողովրդից և պայքարում էին նաև դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչների դեմ։ Հասարակական կյանքի վերափոխումն ու զարգացումը բուրժուական հարաբերությունների ուղիով լիբերալները կապում էին ցարական կառավարության, վերևից ձեռնարկվող բարեփոխումների հետ։ Այնուամենայնիվ, լիբերալ հոսանքը 50—60-ական թվականներին պրոգրեսիվ նշանակություն ուներ, քանի որ պայքարում էր ֆեոդալիզմի դեմ՝ հանուն կապիտալիզմի զարգացման։

Որոշակիորեն այլ էր ազգային-պահպանողական հոսանքի էությունը։ Ի տարբերություն կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչների, ազգային-պահպանողականները պրոպագանդում էին առևտրի զարգացում, ազգային լեզվի, գիտության և կուլտուրայի ծաղկում։ Սակայն նրանք կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչների նման, կողմնակից չէին ֆեոդալական հարաբերությունների ոչնչացմանը։ Ազգի գոյությունը պահպանելու գործում ազգային-պահպանողականները մեծ նշանակություն էին տալիս եկեղեցուն։ Բայց այս հարցում ևս նրանք էապես տարբերվում էին կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչներից։ «Եթե կղերա-աղայական հոսանքի համար եկեղեցու խաչվառն էր ազգության դրոշը, ազգային պահպանո-

ղականների համար ոչ թե եկեղեցին, այլ նրանով գոտեպնդված «ազգն» էր գերագույն և ինքնագո հեղինակությունը։ Ազգային լեզու և գրականություն, ազգային լուսավորություն և դաստիարակություն, ազգային պատմություն, ազգային ավանդություն ու բարք—ահա այն արժեքները, որոնք, եկեղեցուն, նրա դավանությանն ու ծեսերին համընթաց, երաշխիք էին նրանց համար ազգի կենդանության»[1]։

Երիցյանը չդարձավ այդ հոսանքներից ոչ մեկի կարկառուն ներկայացուցիչը կամ հետևողական պաշտպանը։ Իր քաղաքական հայացքներով նա հիմնականում հարում էր ազգային պահպանողական և մասամբ՝ լիբերալ-բուրժուական հոսանքներին։ Այդ բանում համոզվելու համար շարադրենք նրա հայացքները ժամանակաշրջանին հատուկ և հուզող մի շարք հարցերի նկատմամբ։ Այդպիսի հարցերից մեկն էր Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի, տնտեսական զարգացման հարցը։

Երիցյանը գտնում էր, որ պետք է զարկ տալ Անդրկովկասի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը. «Կովկասը իր սար ու ձորով, իր լեն ու շոգ դաշտերով, անտառներով ու հանքերով ամեն տեղ ամենահարուստ երկրների կարգումն է դասած և էնպիսին է նրա օդն ու հողը, որ ամեն բանի լավը կարելի է առաջացնել»[2]։ Անդրկովկասի տնտեսության զարգացման գործում նա մեծ նշանակություն էր տալիս երկաթուղիներին, նշելով, որ երկաթուղիները կնպաստեն Եվրոպայից Անդրկովկաս ներմուծվող, ինչպես և Անդրկովկասից Եվրոպա արտահանվող ապրանքների աճին։

Սակայն Երիցյանը նյութական բարիքների ստեղծման աղբյուրը փնտրում էր ոչ թե արտադրության, այլ շրջանառության ոլորտում։ Նա արևմտաեվրոպական մերկանտիլիստների նման հասարակության հարստության աղբյուր համարում էր փողը և բնականաբար մեծ նշանակություն էր տալիս առևտրին։ «Բոլոր մարդկանց վիճակը կախված է առևտրից... Եթե հանկարծ վերջանար աշխարհի վրա լդ առ ու տուրը, կարելի է ասել, որ ընդհանուր մարդկությունը կկտորվեր, հարյուր միլիոնավոր մարդիկ քաղցած կմնային և էսքան դարերի աշխատանքի պտուղը— այժմյան լուսավորությունը կանհետանար աշխարհիս երեսից»[3]։

Երիցյանը գտնում էր, որ երկրի ներսում առևտուրը պետք է ազատ լինի, յուրաքանչյուր մարդ պետք է արտադրի կամ առուտուր անի այն չափով, ինչ չափով կարող է, իսկ մենաշնորհը ազատ առևտրի կամ մրցակցության համար մահ է։

Սակայն, ի տարբերություն մերկանտիլիստների, արտաքին առևտրի հարցում Երիցյանը պաշտպանում էր հովանավորման քաղաքականությունը։ Ըստ նրա, օտար երկրներից ներմուծված ապրանքների վրա պետք է մաքս դնել, կամ որևէ կերպ սահմանափակել այդ ներմուծումը, հենց նրա համար, որ տեղական բուրժուազիան ևս հնարավորություն ունենա զարգանալու։

Գյուղացիական հարցի մասին Երիցյանը արտահայտվեց դեռ 60-ական թվականների կեսերին։ Ռուս լիբերալների նման նա գտնում էր, որ ռեֆորմը ազատություն բերեց հորտերին։ Սակայն 80-ական թվականներին, երբ հողագործության մինիստրության կողմից գործադրվեց Վազախի ու Բորշալուի գավառները և ուսումնասիրեց պետական գյուղացիների անտեսական դրությունը, նա եկավ այն համոզման, որ գյուղացիության մեծ մասը տառապում է աղքատության և իրավազրկության մեջ, որ պետությունը, կալվածատերերն ու վանքը իրենց ձեռքն են պահում բոլոր տեսակի հողերի ավելի քան կեսը, իսկ գյուղացիները սակավահող են և կամ հողազուրկ։

Այն հարցին, թե կարելի էր արդյոք վերացնել գյուղում առաջացած մասսայական սակավահողությունը պետության, վանքի, կալվածատերերի և կուլակների հողերը բռնագրավելու և դրանք աշխատավոր գյուղացիությանը հանձնելու ճանապարհով, Երիցյանը տալիս էր բացասական պատասխան։ Նա գտնում էր, որ «հին կարգերը մի անգամից քանդելը իրենից ներկայացնում է մեծ անհարմարություն»[4], իսկ սակավահող կամ հողազուրկ գյուղացիներին հողով ապահովելու համար առաջարկում էր յուրացնել նորանոր տարածություններ, տեղափոխել

---

[1] Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, Երևան 1956, էջ 33։

[2] «Վաճառական», 1866, № 4։

[3] Նույն տեղում, № 18։

[4] «Материалы для изучения экономического быта государственных крестьян в Закавказье», т. II, вып. III, էջ 95։

գյուղացիների մի մասին Կարսի մարզը, խորհուրդ տալ գյուղացիներին, որ իրենց սեփական միջոցներով հողեր գնեն կալվածատերերից, կազմակերպել խոշոր տնտեսություններ, որոնք կբարելավեն գյուղացիների վիճակը և դուրս կբերեն գյուղատնտեսությունը հետամնացությունից և այլն։

Պատմաբանը թվարկում էր այն բազմաթիվ հարկերն ու տուրքերը, որոնք գյուղացիները վճարում էին պետությանը, կալվածատերերին ու եկեղեցուն։ Նա ցույց էր տալիս, որ իշխանությունները հարկադրում են գյուղացիներին՝ առանց հաշվի առնելու նրանց տնտեսական կարողությունը։ Կան գյուղեր, որոնց հողը և շատ է, և բարեբեր, սակայն հարկադրված են անհամեմատ ավելի քիչ, քան այն գյուղերը, որոնց հողը և քիչ է, և սակավաբեր։ Եթե գյուղացիները չեն վճարում հարկերը, ապա իշխանությունները կիրառում են նրանց նկատմամբ պատժի դանդաղ տեսակներ։ Սակայն Երիցյանը չէր առաջարկում արմատական միջոցառումներ ու վերափոխումներ գյուղացիների վիճակը բարելավելու համար։ Նա գտնում էր, որ անհրաժեշտ է միայն կարգավորել հարկահանության եղանակները։

Պատմաբանը կանգ էր առնում առևտրականների և վաշխառուների գործունեության վրա և ցույց էր տալիս, որ նրանք ստրկացրել են գյուղացիության մեծամասնությանը, բայց նրանց գոյությունը գյուղում անհրաժեշտ էր համարում, գտնելով, որ շնորհիվ դրանց գյուղացիները ժամանակին են վճարում պետական հարկերն ու տուրքերը [1]։

Երիցյանը չհասավ ոչ դասակարգերի և ոչ էլ դասակարգային պայքարի ըմբռնմանը գյուղում, թեև նա արձանագրում էր, որ գյուղացիները պահանջում էին կալվածատերերից հող, ոռոգումների համար ջուր, հրաժարվում էին հարկեր տալուց, պարհակներ կատարելուց և պարտքերը վերադարձնելուց։ Այդ ամենի մեջ նա տեսնում էր միայն կալվածատերերի և գյուղացիների միջև եղած հարաբերությունների խախտում և գտնում, որ «արտոնյալ դասի հարաբերությունների կանոնավորումը գյուղական համայնքների հետ... այժմ խիստ ցանկալի է» [2]։

Գյուղացիության հարցում Երիցյանի հայացքները հանգում էին այն բանին, որ նա համամիտ էր գյուղատնտեսության կապիտալիստական զարգացմանը, բայց, դրա հետ մեկտեղ, կոգմնակից չէր ֆեոդալական հարաբերությունների, մասնավորապես խոշոր հողատիրության, լիակատար ոչնչացմանը։ Հետևաբար նա հետապնդում էր համապարտ [illegible] ման համատեղելիությունը ֆեոդալական վերապրուկների հետ։

Երիցյանը որոշ չափով անդրադարձել է նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հարցերին։ Ի տարբերություն կղերամիտ Մ. Մսերյանի, որը բացասական վերաբերմունք ուներ 1862 թ. Զեյթունի ապստամբության նկատմամբ, Երիցյանը մեծ խանդավառությամբ արձագանքեց այդ ապստամբությանը։ Նա կոչ էր անում օգնել զեյթունցիներին թե նյութապես և թե բարոյապես։ Յուրաքանչյուր հայ պետք է գիտենա, «որ տալիս է իր նվերը իր ամենից ընտիր և արժանավոր եղբայրների համար, նոցա համար, որոնք իրանց ազգային և մարդկային իրավանց պահպանության համար արյուն թափելու պատիվ ունեցան» [3]։

Սակայն հետագայում նա նահանջեց այդ առաջադիմական դիրքերից։ Այսպես, 1865 թ. Թիֆլիսի համքարների ելույթը նա համարում էր անկարգություն [4], իսկ նարոդնիկների կատարած տեռորիստական ակտերը ռուսական ցարերի նկատմամբ որակում էր որպես չարագործություններ և ուրախ էր, որ այդ չարագործություններին հայ չի մասնակցել։ Այդ տեռորիստական ակտերը նա դիտում էր իբրև կրոնի թուլացման հետևանք և նման բաներ չկրկնվելու համար առաջարկում էր կրոնի դասավանդումը դնել բարձր հիմքերի վրա [5]։ Անդրադառնալով զեկաբրիստների շարժմանը, Երիցյանը այն անվանում էր խռովություն և փորձելով արդարացնել Նիկոլայ I-ի արյունարբու գործունեությունը, գրում էր. «Խռովությունը դադարելու համար հարկ եղավ զենք գործ դնել» [6]։ Պատմաբանի նման դիրքավորումը, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ նա ծառայության մտնելով Կովկասի փոխարքայությունում, մոտ էր ցարական բյուրոկրատական շրջանների հետ։

---

[1] «Материалы для изучения экономического быта государственных крестьян в Закавказье», т. II, вып. III, էջ 213։

[2] Նույն տեղում, էջ 81։

[3] «Մեղու Հայաստանի», 1863, № 21։

[4] Ա. Երիցյան, Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար, Թիֆլիս, 1877, էջ 3։

[5] Մատենադարան, Երիցյանի ֆոնդ, թղթապանակ № 151, վավերագիր № 19։

[6] Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայերը 19-րդ դարում, Թիֆլիս, 1894, մասն Ա, էջ 229։

Երիցյանի հայացքները յուրաքանչյուր էին օրիենտացիայի հարցում։ Դեռ 60—70-ական թվականներին նա հակված էր դեպի Թուրքիան, մի բան, որը բնորոշ էր ազգային-պահպանողականների համար։ Ազգային-պահպանողականները, գրում է Աշ. Հովհաննիսյանը, «վտանգված համարելով ազգի և եկեղեցու գոյությունը Ռուսաստանում... ընդդիմակայում էին ցարիզմին և նրա քաղաքականությանը, որոնելով ազգային անցյալի և ներկայի հաստատանը Ռուսաստանից դուրս՝ Թուրքիայում»[1]։

Սակայն հետագայում, երբ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հնարավորություն ստացավ ավելի մոտիկից ծանոթանալու Թուրքիայի իրականության հետ, նա տեսավ, որ հայը Թուրքիայում ապագա չունի, որ նա այնտեղ կոտորվում և ոչնչանում է։ Պատմաբանը սկսեց քննադատել Թուրքիայի ազգային քաղաքականությունը և ցույց տվեց, որ թուրք կառավարիչների վարած քաղաքականության հետևանքով հայը դիմում է հավատափոխության, դառնալով մահմեդական, բողոքական կամ կաթոլիկ։ Հայ գյուղացին, «եթե չհամաձայնի ինչ անե,— գրում էր նա,— տաճկաստանցի հայ շինականը տեսնում է, որ տերության գործակատարները յուրյան կեղեքում են, դատավորները յուր իրավունքները յուրյան հանցանք են համարում, որովհետև հայ է, մինչև անգամ իր մոտիկ դրացի մուսուլմանը նորան արհամարհում է, հայհոյում է, աստծո ստեղծածը չէ համարում— ամենքը նորան զարնում են, ամենքը թալանում, ամենքը հալածում և ոչ ոք կա նրան պաշտպան, վասն զի հայ է։ Բայց նրա դրկից Կրպոն, որ կաթոլիկության դիմեց— այսօր ֆրանցուզի պաշտպանության տակ է, թող մեկը դիպչի կաթոլիկ եղած Կրպոյին— քահանան խսկույն կգրե Կարնո մոնսինիորին և Պաղիսից սաստիկ հրաման կգա զայմաղամին վրա— Կրպոյին չդիպչել։ Ահա Մկոն — որ քանի մի օր առաջ բրոտ (բողոքական— Ա. Հ.) եղավ ու պատվելիների մոտ կերթա-կուդա, թող քուրդը տանի նրա ոչխարը — Մկոն կերթա Կարին և միսիոնարի ձեռքով ինգլիզից հրաման կբերի, թե Մկոյի ոչխարը ետ պետք է դարձվի։ Հայը ո՞ւմ դիմի»[2]։

Երիցյանը կողմնորոշվում է դեպի Ռուսաստանը։ 80—90-ական թվականներին դրած իր աշխատությունների մեջ նա մեծ նշանակություն էր տալիս Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին։ «Ներկա դարուս մեջ,— գրում էր նա Թուրքմենչայի պայմանագրի մասին,— ոչ մի քաղաքական անցք այնքան նշանավոր չէ եղած հայ ազգի համար, որքան պարսկական խղճուկ գյուղի մեջ կայացած հիշյալ պայմանագիրը։ Սրա զորությամբ Հայաստանի սիրտը — Արարատյան աշխարհը՝ յուր նվիրական մայր աթոռով հանդերձ, ընդմիշտ դուրս է գալիս պարսկական լծից և մտնում քրիստոնյա տերության հզոր պաշտպանության ներքո։ Տիրելով այդ սիրտը, Ռուսիան հյուրասիրությամբ բաց էր անում իր դռները այն հայերի համար, որոնք այլևս չդիմանալով դարավոր նեղությանց, հեշտությամբ հրաժեշտ էին տալիս յուրյանց ծննդյան վայրերին և հանուն ազատության գաղթում, համախմբվում էին այս նոր ավետյաց երկրում, մոտ՝ իրանց քաղցր Մասսին և Արագածին, յուրյանց սուրբ էջմիածնին»[3]։

Ցույց տալով ռուս զինվորի պատմական դերը, Երիցյանը չէր անտեսում նաև հայ ժողովրդի ցուցաբերած արիությունն ու խիզախությունը՝ Արևելյան Հայաստանը պարսից լծից ազատագրելու գործում։ Նա հատուկ սիրով էր խոսում այն հայ հերոսների մասին, որոնք չեն խնայել իրենց կյանքը Հայաստանի ազատագրման համար։ Պատմաբանը գտնում էր, որ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը պետք է կոչել նաև «Հայոց ազգային պատերազմ ընդդեմ պարսից դարավոր բռնակալությանց»[4]։

Անդրադառնալով հայ գյուղացիների վիճակին՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, Երիցյանը նշում էր, որ նրանք չազատվեցին աղաների ու բեկերի ճորտությունից, բայց դրա համար մեղադրում էր Պասկևիչին։ Նա ընդհանրապես կտրում էր առանձին պաշտոնյաների վարած քաղաքականությունը պետության ընդհանուր քաղաքականությունից։

Երիցյանի ազգային-պահպանողական հայացքները ավելի ակնբախ են դրսևորվում դիտության և կուլտուրայի հարցերում։ Նա պատմաբան էր և, ի տարբերություն իր ժամանակի մի շարք պատմաբանների, զբաղվում էր հայ ժողովրդի պատմության համարյա բոլոր շրջաններով։ Այսպես, 1871—1872 թթ. Դեբեդի ձորում նա կատարեց հնագիտական պեղումներ Ռոնակ գյուղի հնագույն դամբարանադաշտում, որոնք գիտականորեն կազմակերպված առաջին պեղումներն էին Անդրկովկասում։ Նա բաց արեց բազմաթիվ դերեզմանատներ, որտեղ դտավ

---

[1] Աշոտ Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, էջ 33։

[2] «Փորձ», 1879, № 2, էջ 113։

[3] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը..., մ. Ա, էջ 303։

[4] Նույն տեղում։

կավից պատրաստած զանազան ամանեղեններ, բրոնզե իրեր՝ դաշույններ, նիզակներ, ապարանջաններ, հնագույն մշակույթի զանազան մնացորդներ և այլն[1]։ Հայտնաբերված այդ նյութական մշակույթի մնացորդների հիման վրա Երիցյանը առաջին անգամ ենթադրեց բրոնզե դարի երկու տարբեր դարաշրջանների գոյությունը Անդրկովկասում։ Դերեգի ավազանում կատարած պեղումների արդյունքները նա հրատարակեց «Кавказ» թերթում և իր խմբագրությամբ 1872—1874 թթ. Թիֆլիսում լույս տեսնող «Кавказская старина» ամսագրում։ Նա հոգ էր տանում հայտնաբերված հնագիտական առարկաների, բևեռագիր արձանագրությունների և այլ նյութերի պահպանության ուղղությամբ։ Նրա կատարած հնագիտական այդ հայտնագործությունները, անշուշտ, զգալի չափով օգնում են Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի, հին շրջանի պատմության մի շարք հարցերի գիտական լուսաբանությանը։ Պատմաբանը ջերմորեն սիրում էր հնագիտությունը և գտնում, որ հնագետը պետք է լինի բազմակողմանիորեն զարգացած մարդ, իսկ ովքեր ծաղրում կամ արհամարհում էին հնագիտությունը, նրանց անվանում էր ագետ և գանհիկ[2]։

Երիցյանը զբաղվեց նաև հայ ժողովրդի պատմության հին շրջանով։ 1866 թ. լույս ընծայած «Ընթերցարանում» նա մեծ տեղ էր հատկացնում հայկական հին ավանդություններին, առասպելներին ու պատմական իրողություններին, հայ թագավորներին ու նրանց գործունեությանը։ 1874 թ. կարդացած դասախոսություններից մեկում Երիցյանը Տիգրան II-ին և Արտաշես II-ին անվանում է ժողովրդի սիրելիներ և մեծարում նրանց կատարած գործերը։ 1883 թ. գրած «Ղազար Փարպեցին և պ. Խալաթյանը» դրախոսությունում նա վերլուծում էր Հայաստանում IV—V դդ. կատարված դեպքերը և ցույց էր տալիս, որ նշված ժամանակաշրջանում կար երկու կուսակցություն՝ պարսկական և հունական։ Բայց ժամանակի ընթացքում առաջ է գալիս նաև ազգային կուսակցությունը, որը պայքարում էր ազգի անկախության ու ինքնուրույնության համար, նրա լեզվի, պատմության և գրականության զարգացման համար։ Այդ կուսակցությունը գանում էր. «ոչ հունաց, ոչ պարսից լեզու, այլ հայոց լեզու, ոչ մեկի և ոչ մյուսի դրոշիտություն, այլ հայոց, ոչ որից անկախ կրոնական վարչություն, ազատ, անկախ կրոն։ Այդպես էր, որքան հասկանում ենք, անցքերի հոգին Ներսեսի, Սահակի և Մեսրոպի գործունեությանց պտուղը։ Այդ երրորդ կուսակցությունը ամեց մեզ հայոց կատարելագործված այբուբենը, Ս. գրքի սքանչելի թարգմանությունը, հայ ժամասացությունը և վերջապես դորա արդասիքներն են՝ մեր գրականությունը, մեր ազգային հոգին»[3]։ Հարկ է նշել, որ Երիցյանը այդ դեպքերը համեմատում էր XIX դ. դեպքերի հետ և փնտրում նրանց միջև նմանություն։

Երիցյանը զգալի չափով զբաղվել է նաև հայ ժողովրդի միջնադարի պատմության ուսումնասիրությամբ։ 1880 թ. նա գրեց հատուկ հոդված թոնդրակյան շարժման մասին և թեև չկարողացավ գիտականորեն բացատրել այդ շարժման սոցիալական արմատները, բայց օբյեկտիվորեն գնահատեց թոնդրակյան «աղանդի» առաջադիմական էությունը։ «Անկարելի է չխոստովանել,— գրում էր նա,— որ աղանդները մի երկրի, մի ազգի մտավոր, եթե ոչ զարգացման, գոնե սթափության, շարժման նշաններ են... մեռած, մտավոր քնի մեջ ընկղմված ազգերը, որոնց ուղեղը չէ արամադրված քննելու ու զննելու և ոչ ազատ կարող են ծնել»[4]։

Սակայն Երիցյանը ավելի շատ զբաղվել է հայ ժողովրդի պատմության նոր շրջանով՝ XVIII, XIX դարերով։ Նա թողել է ուսումնասիրություն Աղա Մահմեդ խանի 1795 թ. դեպի Թիֆլիս կատարած արշավանքի մասին, որտեղ ցույց է տվել այդ արշավանքների կործանարար նշանակությունը Թիֆլիսի բնակիչների համար։

1877 — 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ պատմաբանը գրեց օրագիր, որի մեջ արտացոլեց այդ տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական անցուդարձերը։

80-ական թվականներին Երիցյանը կազմեց Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակագրությունը։ Համեմատելով Արևելյան Հայաստանի բնակչության աճը Արևմտյան Հայաստանի հետ, նա իրավամբ նշեց, որ XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում հայ բնակչությունը աճում է, իսկ Արևմտյան Հայաստանում, ընդհակառակը՝ նվազում։ Նա հատուկ ուշադրություն դարձրեց Երևանի նահանգի ազգաբնակչության վրա և եկավ

---

[1] Տե՛ս Մատենադարան, Ալեքսանդր Երիցյանի ֆոնդ, վավերագիր № 21, թղթապանակ № 157։

[2] Տե՛ս «Մշակ», 1896, № 151։

[3] «Արձագանք», 1883, № 49։

[4] «Փորձ», 1880, № 10, էջ 92.

այն ճիշտ եզրակացության, որ քաղաքային բնակչությունը համեմատած գյուղական բնակչության հետ արագ է աճում։ Սակայն Երիցյանը, չկարողանալով գիտականորեն բացատրել այդ բավականին ուշագրավ երևույթի պատճառը, այն փնտրում էր հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունների մեջ։ Նա գրում էր. «Հայը մարդկության ընդհանուր պատմության մեջ ամենատոկուն, դիմացող և, հետևաբար, արագ բազմացող ազգերից մեկն է, մի նշանավոր հատկություն, առանց որի, յուր կրած տառապանքներից հետո, նա վաղուց անհետացած պիտի լիներ աշխարհիս երեսից»[1]։

1884 — 1885 թթ. Երիցյանը, ինչպես ասվեց, ուսումնասիրեց Ղազախի և Բորչալուի գավառների գյուղացիների տնտեսական դրությունը. և դրանով թողեց մի կարևոր աղբյուր XIX դ. երկրորդ կեսի հայկական գյուղի սոցիալ-տնտեսական հարցերի լուսաբանության համար։ Հարկ է նաև նշել, որ այդ տարիներին պատմաբանը կազմեց կովկասյան ժողովուրդների մասնավորապես XIX դ. պատմությանը վերաբերող մատենագրական մի այնպիսի տեղեկատու, որը մինչև այսօր էլ կարող է ցույց տալ էական օգնություն բոլոր նրանց, ովքեր կզբաղվեն կովկասյան ժողովուրդների պատմությամբ ընդհանրապես և նրանց սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությամբ մասնավորապես[2]։

Երիցյանի աշխատություններում զգալի տեղ է գրավում նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը։ Բացի առանձին հոդվածներից, այդ հարցի շուրջը նա գրել է նաև մենագրություններ։ Նա ցույց էր տալիս, որ հայ-ռուսական առևտրական հարաբերությունների պատմությունը ավելի հին է, քան քաղաքական հարաբերությունների պատմությունը, առաջինը սկսվել է դեռ արաբական տիրապետության ժամանակաշրջանից, իսկ երկրորդը՝ XVIII դարից։ Սակայն Երիցյանը գլխավոր շեշտը դնում էր ոչ այնքան հայ և ռուս ժողովուրդների, որքան հայ կաթողիկոսների և ռուսական ցարերի միջև եղած հարաբերությունների վրա։ Ռուսական ցարերին նա համարում է հայ ժողովրդի բարեկամներ և նույնիսկ սիրողներ։ Այնուամենայնիվ Երիցյանը երևան բերեց զգալի չափով նոր նյութեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ-ռուսական հարաբերությունների պատմության գիտական մշակման համար։

Պատմաբանը չորս հատորով կազմել էր «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում» փաստաթղթերի ժողովածու։ Բայց միջոցներ չունենալու պատճառով չկարողացավ հրատարակել այն։ Բարեկամները խորհուրդ տվին դիմել հայկական եկեղեցու որևէ թեմի օգնությանը։ Մինչ նա պատրաստվում էր խնդրագիր ուղարկել Նոր-Նախիջևան, մահը կտրեց նրա կյանքի թելը։ Ցավով պետք է նշել, որ նրա այդ ժողովածուն պատմական մի շարք արժեքավոր փաստաթղթերի հետ միասին ոչնչացվեց 1917—1920 թթ. ընթացքում։

Երիցյանը սոսկ հայագետ չէր։ Նա նաև կովկասագետ էր. կովկասագիտությունը հանդիսանում էր նրա երկերի հիմնական և բնորոշ կողմը։ Դեռ 60-ական թվականներին, աշխատելով Բերժեի կողմից գլխավորվող «Акты Кавказской археографической комиссии» վավերագրերը հրատարակող հանձնաժողովում, պատմաբանը հայտնաբերեց ու հրատարակեց կովկասյան ժողովուրդների XIX դ. պատմությանը վերաբերող մի շարք արժեքավոր նյութեր։ Հետագա 70—90-ական թվականներին նա գրեց թվով ոչ քիչ աշխատություններ՝ նվիրված Կովկասում տեղի ունեցած երկրաշարժերի, տարածված հիվանդություններին, կառուցած և կառուցվող ճանապարհների և այլ հարցերի պատմությանը։

1891 թ. պատմաբանը հրատարակեց «Католицизм в Грузии» ընդարձակ հոդվածը։ Այս հոդվածում նա ոչ միայն մերկացնում էր Հռոմի պապերի քաղաքականությունը միջնադարյան Վրաստանում կաթոլիկություն տարածելու գործում, այլև ցույց էր տալիս վրաց ժողովրդի հերոսական պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ։ Հետաքրքիր է, որ պատմաբանի ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական հայացքները չխոչընդոտեցին նշելու վրացիների և հայերի եղբայրությունը, միասնությունը այդ պայքարում։ Երիցյանը նշում էր, որ հայերն ու վրացիները իրար մեջ չեն դրել ազգային կամ կրոնական խտրականություն։ Շնորհիվ այդ բանի՝ հայերը Վրաստանում հաճախ հասել են պալատականի աստիճանի։ Նա ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ հայ-վրացական հարաբերությունները մինչև հիմա ան-

---

[1] «Փորձ», 1881, № 2, էջ 109։

[2] Տե՛ս А. Д. Ерицов, Указатель сочинений, имеющих отношение к изучению экономического быта государственных крестьян Закавказского края (см. Материалы..., т. I, էջ XIII)։

բավարար են ուսումնասիրված և գտնում էր, որ դրանք արժանի են ավելի խորը ուսումնասիրության։ Երիցյանը բարձր էր գնահատում պատմական գիտությունը. «Պատմությունը պատրաստ է տալու որում զհարկս՝ հարկս, որում պատիվ՝ պատիվ»[1]։ Ըստ նրա, «պատմության առաջ միայն այն գործունեությունը կարող է արդյունավետ և նախանձելի համարվել, որը խիստ քննադատության բովից անցել է անվտանգ։ Արդար հոգիք չեն վախենում ոչ մահից, ոչ ննությունից»[2]։

Նա գտնում էր, թե պատմությունն ինքը անաչառ կերպով երևան կբերի օբյեկտիվ ճշմարտությունը. «Պատմությունը անաչառ է, և թե նոքա, որոնց որևէ արժեք ունին ապագայում հիշվելու, միշտ կարող են հուսալ, որ այդ ապագան արդարացի վճիռ պիտի կարդա իրենց վրա։ Կրքոտ թշնամիք և ղրպարտությունը, ինչպես նաև երեսպաշտական շողոքորթանքն անհետանում են ժամանակի հետ, տեղ տալով անկողմնակալ և անխնա զուտ ճշմարտությանը»[3]։

Բացի ազգային պատմության հարցերից, Երիցյանը անդրադարձել է նաև ազգային լեզվի, գրականության ու կուլտուրայի հարցերին։ Դեռ 1856 թ.՝ գիմնազիայում եղած ժամանակ նա իր դասընկեր Գ. Տեր-Ալեքսանդրյանի հետ միասին հիմնադրում է «Միրագումար ժողով» խմբակը, Դ. Տեր-Ալեքսանդրյանը հանդիսանում էր խմբակի նախագահը, իսկ ինքը՝ քարտուղարը։ Սկզբնական շրջանում «Միրագումար ժողովը» ծառայում էր ինքնուսուցման նպատակին, բայց 1858 թ. սկսած նրա անդամներն սկսեցին դուրս գալ հասարակական-կուլտուրական ասպարեզ, ընդգրկելով և դպրոցը, և գրականությունը, և թատրոնը։ Խմբակի անդամները մեծահասակների համար բաց էին անում կիրակնօրյա կուրսեր, հավաքում էին գրքեր և հիմնում դրադարաններ, կազմակերպում էին ձրի ուսուցում չքավորների և որբերի համար, տալիս ներկայացումներ, ստեղծում երգեցիկ խմբեր, գրում հոդվածներ կամ կատարում թարգմանություններ «Մեղու Հայաստանի» թերթի համար և այլն։ Խմբակի գլխավոր նպատակը աշխարհաբար լեզվի տարածումն ու զարգացումն էր։ «Միրագումար ժողովը» դադարեց գործելուց 1862 թ., երբ «Կռունկ» թերթի խմբագիր Մարկոս Աղաբեկյանը գիմնազիստների, Ներսիսյան դպրոցի և Լազարյան ճեմարանի լավագույն ուժերից կազմակերպեց առաջին կիսապրոֆեսիոնալ թատերական խմբակը և ներկայացումները դուրս հանեց քաղաքային թատերաբեմ։ «Միրագումար ժողովը»,— գրում էր Պ. Պոռչյանը,— մի կայծ էր, որից հայ լեզուն սիրել ավոր կրակներ առաջացան»[4]։

Հետագա տարիներին Երիցյանը չմասնակցեց նման կամ այլ բնույթի խմբակների, բայց առանձին դասախոսություններում, հոդվածներում և ուսումնասիրություններում անդրադառնում էր ազգային լեզվի, գրականության ու կուլտուրայի հարցերին։ Նա լեզվի հարցերում ավելի առաջադիմական հայացքներ ուներ, քան դրաբարի հավերժացմանը ձգտող կղերամիտ Մ. Մսերյանը։ Երիցյանը գտնում էր, որ հասարակությունը լուսավորելու համար անհրաժեշտ է դրել նրա համար մատչելի լեզվով՝ աշխարհաբար լեզվով։ Նա հայ նոր, աշխարհաբար լեզվի զարգացումը կապում էր ոչ թե առանձին անհատների, այլ ժողովրդի հետ. «Մեր աշխարհաբարը վաղուց արդեն գործնական դառնալով գրականության մեջ, ոչ ոքի առանձնապես պարտական չէ, այլ միայն իր այն ներքին ուժին, որ օրեցօր տանում է դորան դեպի կատարելագործություն»[5]։ Իսկ առանձին անհատներ լեզվի վրա ազդեցություն են ունեցել «միայն այն ժամանակ, երբ նոցա գեղեցիկ և օրինակելի գրվածները ժողովուրդը սիրել է, պաշտել է, սերտել է»[6]։

Պատմաբանը անդրադարձել է հայ գրականության ու կուլտուրայի բազմաթիվ գործիչներին և գնահատել նրանց ազգային-պահպանողական դիրքերից։ Այսպես. նա չէր համակրում Նալբանդյանին։ Ձգտելով նսեմացնել նրա վեհ պայքարը ընդդեմ խավարի և ռեակցիայի, Երիցյանը այդ պայքարին տալիս էր նեղ, անձնական բնույթ։ Բայց և այնպես պատմաբանը գնահատում էր Նալբանդյանին, նշելով, թե նա կենդանություն էր տալիս «Հյուսիսափայլին», որ եթե «Հյուսիսափայլը» ուներ արժանավորություն, ապա դա շնորհիվ Կոմս Էմմանվելի աշխատությունների[7]։ Երիցյանը խիստ քննադատության ենթարկեց Ստեփանոս Նազարյանին այն

---

[1] «Փորձ», 1879, № 11, էջ 64։

[2] «Լրծագանք», 1892, № 80։

[3] «Մշակ», 1896, № 151։

[4] «Տարազ», 1902, № 8։

[5] «Փորձ», 1881, № 5 — 6, էջ 257.

[6] «Փորձ», 1879, № 9, էջ 81։

[7] «Վաճառական», 1866, № 7։

բանի համար, որ նա չէր ընդունում եկեղեցու ղեկավար դերը, քննադատում էր հոգևորականությանը և պահանջում էր մտցնել հայ եկեղեցու մեջ բարեկարգումներ։

1890 թվականին պատմաբանը գրեց Գրիգոր Արծրունու կենսագրությունը։ Բնորոշ է, որ նա գլխավոր շեշտը դնում էր Արծրունու ազնվական ծագմանության վրա, իսկ լիբերալիզմը լռության մատնում։ Այնուամենայնիվ Երիցյանը նշում էր. «Արծրունու գրածները օրըստօրև հռչակ էին ստանում ու սիրով կարդացվում»[1], որ «Մշակը» կարողացավ մեծ հեղինակություն վայելել միայն Արծրունու շնորհիվ և «այն օրից, երբ Գրիգոր Արծրունին վախճանվեց... նրա «Մշակը» կորցրեց յուր համն ու հոտը»[2]։

Երիցյանը մեծ համակրանքով էր խոսում պահպանողականներ Քերովբե և տեր-Գաբրիել Պատկանյանների մասին։ Առաջինին նա անվանում էր հռչակավոր գիտնական, իսկ երկրորդին՝ նավավար, որը բազմիցս պատերազմել է ազգային հալածանքների դեմ։ Նրա կարծիքով, տեր-Գաբրիել Պատկանյանի կենսագրությունը շարադրելու համար պետք է պատմել «ներկա դարուս գրեթե մեր ամբողջ պատմությունը»[3]։

1883 թ. Երիցյանը շարադրեց Մխիթարյան միաբանության պատմությունը սկզբից մինչև XIX դ. 60-ական թվականները։ Նա գտնում էր, որ Մխիթարյանները զգալի չափով նպաստել են հայագիտության զարգացմանը։ Արսեն Բագրատունու «Քերականությունը» նա անվանում է մի կոթող, «որը ամփոփում է յուր մեջ հայկական դպրության լեզվագիտական բոլոր կատարելագործությունները և յուր տեսակների մեջ նմանը չունի տակավին»։ Չամչյանի մասին խոսելիս, նշում էր, որ եթե չլիներ նրա աշխատասիրությունը, «հայ ազգը գուցե և մինչև այսօր էլ չունենար յուր ընդարձակ պատմությունը»։ Ղուկաս Ինճիճյանին նա անվանում էր հայ հնախոսության հիմնադիրը և այլն[4]։

Բայց այդ բոլորով հանդերձ Երիցյանը որոշ հարցերում քննադատում էր Մխիթարյան գիտնականներին։ Նա ցույց էր տալիս, օրինակ, որ նրանք հայ պատմիչների գործերը տպագրում են աղավաղումներով, դուրս գցելով այն, ինչ իրենց դուր չի գալիս, որ նրանց կազմած քերականությունը անմատչելի է երեխաների համար, որ Չամչյանի պատմությունը «տիրող անձանց հաջողությունների պատմություն է, բայց ոչ ազգի ներքին կենաց», որ Մխիթարյանները հեռացել են պապենական դավանանքից և ընդունել կաթոլիկություն, որ թարգմանել են կաթոլիկ հեղինակներին և չեն թարգմանել ոչ կաթոլիկ այնպիսի հեղինակների, ինչպիսի են Մոլիերը, Բուալոն, Դեկարտը, Ռուսոն, Վոլտերը, Բերանժեն, Լամարթինը և այլն։

Անշուշտ, չպետք է կարծել, թե այսքան հնչեղ անուններ տալուց հետո ինքը Երիցյանը անվերապահ առաջ էր քաշում կամ պաշտպանում նրանց քարոզած գաղափարները։ Նա անում էր այդ ամենը սոսկ ազգային-պահպանողական դիրքերից, Մխիթարյաններին հարվածելու, նրանց սուբյեկտիվիզմը բացահայտելու և դեպի լուսավորչական կրոնը վերադարձնելու միտումով։

Երիցյանը անդրադարձել է նաև հայ տպագրության և մամուլի պատմության հարցերին։ Նա նշում էր, որ մամուլը պիտի ունենա դաստիարակչական նշանակություն, նրանում չպետք է տեղ գտնեն կեղծավորությունն ու ստախոսությունը, խարդախությունն ու կիրքը, մամուլը պետք է լինի մի հայելի, «որի մեջ երևում է ազգի ոչ միայն արտաքին դեմքը և գծագրությունը, այլև ներքին տրամաբանությունն ու հոգին»[5]։

Երիցյանը գրեց մի շարք աշխատություններ նաև հայ դպրոցի մասին։ Նա դպրոցը համարում էր ժողովրդի մտավոր զարգացման ջերմաչափ, լուսավորության տաճար, հասարակության դաստիարակության և կրթության լավագույն օջախ և այլն[6]։ Նա գտնում էր, որ դպրոցներում պետք է աշխատեն բարձրորակ ուսուցիչներ, իսկ դասավանդումը տարվի խելացի ծրագրով։ Ի տարբերություն Մ. Մսրյանի սխոլաստիկ ուսուցման, Երիցյանը ուսուցիչներից պահանջում էր. «Էնպես սովորեցրեք, որ աշակերտն ուսումնարանն ավարտելուց հետո, ուսումնարանում չթողնի իր բոլոր սովորածը ու աշխարհումն նորից հարկադրված լինի սովորելու կյանքին հարկավոր բաներ։ Էնպես արեք, որ նրանց ամեն առարկա սովորեցնելիս, մեր կյանքի-

[1] Ա. Երիցյան, Գ. Արծրունին և նրա քսանհինգ տարվա գրական գործունեության առթիվ (1865—1890), Թիֆլիս, 1890, էջ 89։

[2] «Արձագանք», 1896, № 151։

[3] Նույն տեղում, 1889, № 15։

[4] Ա. Երիցյան, Վենետիկի Մխիթարյանք (տե՛ս «Արձագանք», 1883, № 35)։

[5] «Արձագանք», 1882, № 21։

[6] «Մասիս», 1862, № 565։

քին հարմարեցնեք, որ ամեն առարկա նրան ճիշտ տեղեկություններ տա աշխարհի մասին և ամեն մեկ գիտություն լինի կյանքի համար օգտավետ և ոչ թե գիտությունը սովորել միայն գիտենալու համար»[1]։

Երիցյանը մեծ նշանակություն էր տալիս բնական գիտություններին և կշտամբում էր Մխիթարյաններին, որ վերջիններս այդ ուղղությամբ ոչինչ, կամ համարյա ոչինչ չեն արել։ Նա գտնում էր, որ դպրոցները պետք է բավարարեն կյանքի պահանջներին, գիտությունը ի սպաս դրվի ժողովրդին, բայց այդ գաղափարի իրագործումը նա կապում էր ապագայի հետ։ «Գործ շինողները դեռ չեն հասել, մեծանում են։ Եվ նոր և ապագա մարդիկը միմիայն կարող են գիտությունը կյանքի համար գործածել... բայց էդուր համար նրանք պետք է աշխատեն, սովորեն ու շատ սովորեն և ոչ թե մեղ պես»[2]։

1898 թ. Երիցյանը հրատարակեց «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ (1824—1899)» աշխատությունը։ Նա ծրագրել էր այս աշխատությունը գրել 2 հատորով (առաջին հատորը ընդգրկում է 1824—1850 թթ., իսկ երկրորդը ընդգրկելու էր 1850—1899 թթ.), բայց մահը խանգարեց նրան։ Նա կարողացավ գրել միայն առաջին հատորը և երկրորդ հատորի միայն մի փոքր մասը։ Ամենամենայնիվ պատմարանի այս աշխատությունը հանդիսանում է հայ դպրոցների պատմությունը շարադրելու մի յուրջ փորձ։

Այսպիսով Երիցյանը զգալի գործ է կատարել XIX դարի հայ մշակույթի, մանավանդ պատմագրության բնագավառում։

Երիցյանի պատմագիտական աշխատությունների թվում ամենանշանավորը եղավ «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայքը 19-րդ դարում» ուսումնասիրությունը։ Պատմաբանը ծրագրել էր այդ գիրքը գրել չորս հատորից, բայց կարողացավ գրել միայն երկուսը, առաջին հատորը ընդգրկում է 1800—1832 թթ., իսկ երկրորդը՝ 1832 — 1842 թթ. ընկած ժամանակաշրջանը։ Գրքի հիմնական առանցքը թեև հանդիսանում են հայ կաթողիկոսները և նրանց գործունեությունը, այնուամենայնիվ հեղինակը փաստական հարուստ և հետաքրքիր նյութերի հիման վրա կարողացավ ընդհանուր առմամբ ցույց տալ հայ ժողովրդի մղած պայքարը պարսկական բռնապետության դեմ, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, ինչպես և այդ միացումից հետո հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները։ Հայ պատմագրության մեջ այդ առաջին ուսումնասիրությունն էր՝ նվիրված Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին։

Երիցյանի աշխատություններում մեծ տեղ են գրավում կրոնի և եկեղեցու հարցերը։

Նա ցարապաշտ էր և որպես այդպիսին կղերա-աղայական գիրքերից գնահատեց «Պոլոժենիե»-ն։ Ի հակառակ ազգային-պահպանողականների բացասական կարծիքի, նա գտնում էր, թե «Պոլոժենիե»-ն «վերջապես մի կարգ ու կանոն պիտի մտցներ ազգիս հոգևոր բարեկարգ վարչության մեջ և այլևս տեղիք չի պիտի ունենային այն եղծումները, որոնց շարունակ կրկնվելուց այնքան տուժում էր ժողովուրդը»[3]։ Երիցյանը անտեսում էր, որ «Պոլոժենիե»-ի իսկական նպատակը ոչ թե կարգ ու կանոնի ստեղծումն էր, այլ հայ եկեղեցուն ու հոգևորականությանը ռուսական ցարին ենթարկելը։

Նա հանդիսանում էր հայ լուսավորչական կրոնի ջերմ պաշտպան և կարծում էր, թե կրոնը «այսօր միակ փրկարար միջոցն է մեր պատմական անցյալի անջատած օղակը ձեռք բերելու համար»[4]։ Նա քննադատեց Նազարյանին այն բանի համար, որ սա կղերի հետ չէր կապում հայ ժողովրդի ազգային և սոցիալական հարցերի լուծումը. «Քարոզել ժողովրդին հեռանալ այժմ իր կղերից, ասել է երեխայի չափ հասկացողություն չունենալ քաղաքականության մեջ»[5]։ Նա կոչ էր անում հայությանը համախմբվել կաթողիկոսի շուրջը և ղեկավարվել նրա ցուցմունքներով։

Պատմաբանը հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը կապում էր կաթողիկոսների կամ ռուսական ցարերի գործունեության հետ և դրանով իսկ պատմությունը մեկնաբանում էր իդեալիստական գիրքերից։ Այսպես. նա նկատել էր, որ XIX դ. 50—60-ական թվականները հայ իրականության համար նոր շրջանի սկիզբ են։ «Այդ ժամանակներից սկսած,—

---

[1] «Վաճառական», 1866, № 6։

[2] Նույն տեղում։

[3] Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., մ. Բ., էջ 405։

[4] «Փորձ», 1881, № 5—6, էջ 249։

[5] Նույն տեղում, 1879, № 11, էջ 83։

գրում էր նա,— մեր լեզուն և գիրը, ժողովրդական կրթության գործը, հայոց հոգևորականության դրությունը, և վերջապես, մեր ընտանեկան և հասարակական կյանքը յուր լավ ու վատ կողմերով կարճ միջոցում ընդհանուր մտածողության և հոգատարության առարկա դարձան»[1]։

Իսկ ինչո՞վ էր պայմանավորված այդ շարժումը։ Պատմաբանը երկար ժամանակ չէր կարողանում պատասխանել այդ հարցին։ 1882 թ. կարդացած «Բարեգործությունը հայոց մեջ» դասախոսությունում նա ասում էր. «Այդ բարոյական շարժողությունը, որ այնքան հետաքրքրական է և որին շատերը մեզանից անձամբ մասնակցել են, տակավին արժանապես չքննվեցավ ու դեռ չպարզվեցավ, թե ի՞նչ և ի՞նչ էին դորա շարժառիթները»[2]։ Սակայն 1896 թ. գրած «Փորձ հայոց թատրոնի պատմության» հոդվածում Երիցյանը հետևյալ կերպ է բացատրում այդ շարժման պատճառները։ «Ինչպես որ Ղրիմի (1853—1856) պատերազմից հետո տաճկահայոց մեջ առաջադիմական շարժումն սկսվեցավ, ռուսահպատակ հայոց համար էլ փրկարար եղավ Ալեքսանդր 2-րդ կայսեր թագավորությունը։ Ազատարար արքայի գահակալությանը հետևած մի շարք ազգային դեպքեր զարթեցրին մեր ազգային ինքնաճանաչությունը։ Ներսես V մեծանուն կաթողիկոսի հանկարծական մահը 1857 թ. և նրա նշխարաց հանդիսավոր հուղարկավորությունը, ապա կաթողիկոսական նոր ընտրությանց մասնակցելու ընդհանուր պարտավորությունները, ուսումնասեր և ժողովրդասեր Մաթևոս Հայրապետի չբավոր գայուտը Պոլսից և այլն և այլն, այս բոլորը մեր ազգայնոց համար բարոյական մեծ նշանակություն ունեցավ»[3]։ Այլ կերպ ասած՝ հայ հասարակական կյանքում 50—60-ական թվականներին տեղի ունեցած տեղաշարժերը պատմաբանը կապում էր անհատների՝ թագավորների և կաթողիկոսների հետ։

Երիցյանը կաթողիկոսներին բաժանում էր ուժեղների և թույլերի և գտնում, որ ուժեղ կաթողիկոսը բարելավում է ազգի վիճակը, իսկ թույլը՝ վատթարացնում է այն։ Նա հրապուրված էր Ներսես Աշտարակեցիով և ատելությամբ էր խոսում Հովհաննես Կարբեցու մասին։ Երիցյանը ցույց էր տալիս, որ Կարբեցու օրով աճեց խարդախությունը, կաշառակերությունն ու բռնությունը, հոգևորականության շարքերը լցվեցին ոգետ քահանաներով։ Ընդհակառակը՝ Աշտարակեցու օրով ժողովրդի վիճակը բարվոքվում էր, հասարակական արատավոր երևույթները նվազում էին, հոգևորականության շարքերը մաքրվում էին ոգետներից։ Նա երազում էր էջմիածնի հոգևոր աթոռի վրա տեսնել Աշտարակեցու նման մի ուժեղ անձնավորություն։

Այսպիսով, Երիցյանը ինչպես մի շարք այլ հարցերում, նույնպես և կրոնի ու եկեղեցու դերի գնահատման հարցերում կանգնած էր հետամնաց դիրքերում։ Նա ազգի փրկությունը որոնում էր տակավին հայ լուսավորչական եկեղեցու մեջ և քարոզում ժողովրդին համախմբվել ամենայն հայոց կաթողիկոսի շուրջը այն ժամանակ, երբ գաղափարախոսության այդ նորմաները վաղուց հնացել էին և դարձել հասարակության զարգացման կապանքներ։

Որպես պատմաբան Երիցյանը էկլեկտիկ էր. պատմական միևնույն երևույթների մասին հայտնում էր տարբեր, իրար հակասող կարծիքներ։ Նրա էկլեկտիցիզմը պայմանավորված էր կացությանը յուրահատուկ հակասություններով, նա ապրում էր մի այնպիսի ժամանակաշրջան, երբ տեղի էր ունենում ֆեոդալական կարգերի քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, երբ ծավալվում էին հայ ազգային-ազատագրական շարժումները, բայց դրանց հետ մեկտեղ ուժեղանում նաև բռնությունները, հալածանքներն ու ջարդերը։ Երիցյանը պատմաբան էր և պետական պաշտոնյա. որպես պատմաբան նա արձանագրում էր ժողովրդի ծանր վիճակը, բայց որպես պաշտոնյա ցանկանում էր հարմարվել գոյություն ունեցող կարգերին և չդիմել արմատական միջոցառումներին։

Այնուամենայնիվ Երիցյանը համեմատաբար առաջադիմական գործ էր կատարում, երբ նպաստում էր հայ ազգային պատմության մշակմանը, աշխարհաբար լեզվի, նոր թատրոնի, դրականության և կուլտուրայի զարգացմանը, հրատարակում և շրջանառության մեջ էր դնում հսկայական քանակությամբ պատմական փաստեր և շատ հաճախ հանում այնպիսի եզրակացություններ, որոնք մինչև հիմա էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը։ Երիցյանը պահանջում էր պատմաբանից, որ նրա եզրակացությունները հիմնված լինեն փաստերի վրա և նշում, որ «փաստերից զուրկ, անարդար քննությունը ինքը կկարդա յուր դատավճիռը»[4]։ Իր եզրակացությունները նա հիմնավորում էր հաճախ այնքան շատ փաստերով, որ դերիշխում էին

---

[1] Մատենադարան, Երիցյանի ֆոնդ, թղթապանակ № 156, վավերագիր № 213։

[2] «Արձագանք», 1882, № 17։

[3] «Արձագանք», 1896, № 149։

[4] «Փորձ», 1881, № 5—6, էջ 212։

եզրակացություններին։ Պատմաբանը բարեխղճորեն ուղղում էր իր սխալը, եթե գտնում էր նոր փաստեր։

Այսպես, 80-ական թվականներին նա այն համոզմանն էր, որ ռուսահայոց մեջ առաջին լրագիրը եղել է Թիֆլիսում 1840-ական թվականներին հրատարակվող «Կավկազ» թերթը, բայց 1895 թ. արձանագրում էր. «Մենք ամենքս էլ սխալված ենք եղել, որովհետև Ռուսիայի մեջ հայերեն լրագիր հրատարակելու փորձը առաջին անգամ եղել է ոչ թե Թիֆլիսում, այլ Հաշտարխանում և այն տակավին 1816 թ.»[1]։

Երիցյանն առաջինն էր, որ Արևելյան Հայաստանում Դեբեդի ձորում կատարեց հնագիտական պեղումներ և հայտնաբերեց նյութական մշակույթի բազմաթիվ մնացորդներ։ Նա մեկն էր այն պատմաբաններից, որոնք ուսումնասիրելով հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը, մատնացույց արեցին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման առաջադիմական նշանակությունը։ Նա հասկացավ Թուրքիայի կառավարող շրջանների՝ հայերի նկատմամբ տարվող կործանարար քաղաքականության էությունը և իրավացիորեն քննադատեց այն օրենքները, որոնք կեղծ հավասարություն էին քարոզում քրիստոնյաների և մահմեդականների մեջ։ Պատմաբանը գրում էր. «Չորս հարյուր տարվա սովորությունները մի բոպեի մեջ չեն վերացվի, չորս հարյուր տարվա խոցերը մի ժամվա մեջ անկարելի է բժշկել»[2]։

Քննադատելով Չամչյանին այն բանի համար, թե «նրա գրած պատմությունը տիրող անձանց հաջողությունների պատմություն է, բայց ոչ ազգի ներքին կենաց», Երիցյանը տարբերվեց իրեն նախորդած պատմաբաններից նաև նրանով, որ ուշադրություն դարձրեց հայ հասարակության «ներքին կենաց» վրա։ Նա առաջինը ցույց տվեց Ղազախի և Բորչալուի գավառներում գոյություն ունեցող հողատիրության պատկերը, գյուղացիության սակավահողությունը, նրա ճնշումն ու հարստահարումը իշխանությունների ու կալվածատերերի կողմից։ Պատմաբանը արձանագրեց գյուղատնտեսության հետամնացությունը և իրավամբ նկատեց, որ այդ հետամնացության պատճառներից մեկն էլ հանդիսանում է գյուղացիների սակավահողությունն ու նրանց հարկային ծանրաբեռնվածությունը։

АЛЕКСАНДР ЕРИЦЯН

А. С. АМБАРЯН

(Р е з ю м е)

Александр Ерицян (А. Ерицов) является одним из крупных армянских историков XIX века. Он в значительной мере способствовал разработке истории армянского народа, рассматривая ее в общей увязке с историей народов Закавказья.

В 1870—1872 гг. Ерицян проводил первые научно организованные археологические раскопки на территории Восточной Армении — в районе Лори — и выявил многочисленные ценные памятники древности. В тех же годах он издавал журнал под названием «Кавказская старина», в котором впервые опубликовал ряд интересных документов по древней и средневековой истории Закавказья. В 1877—1878 гг., т. е. во время русско-турецкой войны, будучи чиновником особых поручений у Лорис-Меликова и Шелковникова, Ерицян собрал ценные сведения по истории Западной Армении. В 1879—1883 гг. он издавал статистику армян в Западной Армении и в Закавказье и статистику армянских школ в Закавказье в 70-х годах XIX века. В 1884—1886 гг. Ерицян изучал экономический быт государственных крестьян в Казахском и Борчалинском уездах и собрал многочисленные данные о населении, землевладении, землепользовании, скотоводстве, положении крестьян и т. д. В 90-х годах он составил сборник документов в четырех томах по русско-армянским отношениям конца XVIII и начала XIX вв., который, к сожалению, утрачен.

[1] «Արձագանք», 1895, № 87։

[2] «Փորձ», 1876, № 2, էջ 154։

По своим общественно-политическим убеждениям Ерицян придерживался в основном взглядов национал-консерваторов и зачастую либералов. В области толкования исторических событий он стоял на точке зрения идеализма, приписывая царям, верховным духовным лицам и др. решающую роль в истории. Ерицян, как историк, был эклектиком.

Несмотря на это, Ерицян сделал ряд научных выводов по истории Армении и Закавказья. В частности он впервые высказал мысль о наличии двух периодов эпохи бронзы в истории древнего Закавказья, показал реакционную политику турецкого правительства в отношении западных армян и высоко оценил прогрессивное значение присоединения Восточной Армении к России, большое внимание уделил изучению внутренней жизни армянского народа, в частности во второй половине XIX в. Ерицян указывал на отсталость сельского хозяйства и причины его отсталости искал в малоземелье крестьянства и рутинности техники. Он показал жестокую эксплуатацию крестьян, их обнищание и разорение в результате налогового обложения правительством. Наряду со всеми этим Ерицян осветил также ряд вопросов по истории армянского национального языка, литературы и культуры.

Опубликованные Ерицяном материалы, а также ряд высказанных им мыслей по истории Армении и Закавказья, по настоящее время не потеряли своей научной ценности.